ԳԼՈՒԽ Ե.

Այսպիսի Սիոնի։ Վէճ Յունաց ընդ Հայոց սակս մասնելոյ 'ի Գերեզմանն և հեռաւոր երից ազգաց. Վէճ Լատինաց 'ի Ս. Յարութիւն։ Խռովութիւն Յունաց վասն Ս. Յակոբայ։

ԶՈՐԻԳՈՐ Պատրիարք նեղեալ յերեսաց յայսպիսի չարագուշակ դիպուածոց խորհէր հանապազ խնուլ զբերանս Յունաց, զի հանդերձեալ էին նոքա բանալ զդուռն մեծի խռովութեան. և մինչ նա յայսմ խորհրդի տագնապեալ վարանէր՝ յարեաւ այլ իմն խռովութիւն յերուսաղէմ քաղաքի։ Քանզի միաբանք Հայոց կարի իմն տաղտկացեալ էին 'ի բռնութենէ և 'ի նեղութենէ այլազգեաց Սիոնի, որք անդադար հասուցանէին նոցա զչարիս, խորտակէին զտապանաքարս գերեզմանատանց, եւ զպիտանիսն բարձեալ տանէին 'ի տունս 'ի կիր առնուլ 'ի պէտս շինուածոց իւրեանց, և 'ի ժամանակի գերեզման օրհնելոյ՝ և զննջեցեալս թաղելոյ՝ հասեալ 'ի վերայ քահանայից գանիւք խոշտանգէին՝ և խափանեալ զպաշտօնն՝ հալածական տանէին զնոսա մինչեւ 'ի ներքս 'ի քաղաքն. ապա կուտելով 'ի վերայ նոցա զբանս զրպարտանաց՝ կորզէին 'ի նոցանէ զգումարս դրամոց։ Եւ այսու եւս ոչ չատացեալ, ոմանք 'ի նոցանէ գնացեալ 'ի Կոստանդինուպոլիս, ստութեամբ և պէսպէս բարրանօք զրպարտէին զմիաբանս վանօրէից, որպէս թէ նեղեալ իցեն 'ի քրիստոնէից, և կալուածք մարգարէին Դաւթի մատնեալ 'ի յափշտակութիւն նոցա։ Այսպիսի հնարիւք առեալ հրովարտակս՝ դառնային յերուսաղէմ, եւ նովաւ բռնացեալ 'ի վերայ քրիստոնէից պահանջէին զդրամս, և 'ի վերջոյ ծանր գնով վաճառէին նոցա զհրովարտակն զայն. և այսպէս օր քան զօր զայրանայր չարիք նոցա 'ի վերայ քրիստոնէից՝ եւ չեղեւ հնար ցածուցանել զնոսա 'ի բարկութենէ իւրեանց։ Այլ իբրեւ անցին ըստ չափն՝ եւ յոչ արժանիս եղեն ձեռնարեց, սրտմտեալ քրիստոնէից արդար բարկութեամբ, խուռն բազմութեամբ դիմեցին առ դատաւոր քաղաքին,